ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 68/2 - Ա «13» 04 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի 2026թ. հաստիքացուցակը, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 84-րդ հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 13-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի վերանվանման կապակցությամբ ամբիոնի աշխատողներին տեղափոխել քաղաքացիական պաշտպանության կենտրոն: Աշխատողների աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

2. Գործատուի ծանուցումները, ընդունած անհատական իրավական ակտերը (հրամանները) և այլ փաստաթղթերը առաքվելու են աշխատողի համալսարանական էլեկտրոնային փոստին, որը համարվելու է պատշաճ կարգով իրազեկում (պաշտոնական ծանուցում):

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնին, ուսումնամեթոդական վարչությանը, հաշվապահական հաշվառման վարչությանը և աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Հովհաննիսյան Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ